



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Lin

252

LEV  
252

179 99/1

Ան. Ան. ԲՆՅԱՆԻՆ


155



ՃԱՆՆԱԳՐԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ԳԻՏԻ ԵՐԻՍԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԸ

(Հրատարակական դատախառութիւն որ կարդացվեցաւ սեպտ. 11-ին 1883 թ. Արծրունու թատրոնում)

Ճանապարհորդութեան նպատակը:—Բնագիտական, ազգագրական և հնապատական դիտողութիւններ:—Հայոց և թուրքաց գիւղեր, նրանց անուններ:—Այգեգործութիւն Գանձակի մէջ և շրջակայ գիւղերում. երկրագործութիւն և անասնապահութիւն:—Սնտառներ, նրանց տարածութիւնը. ծառերի տեսակները ընդարձակ անտառներում Փիփի գիւղից սկսած մինչև Գետաբակ (Կեղարեկ) և աւելի հեռու:—Շիպի հանքեր Փիփի գիւղի մօտ (Չաղկի) և Գետաբակի պղնձի հանքեր:—Գետաբակի գործարանը, նրա կազմակերպութիւնը և հիմնադր տնտեսութիւնը. նրա ազդեցութիւնը մօտակայ գիւղերի վրա:—Ազգագրական յատկանիշներ հայոց գիւղերի բնակիչների. սովորութիւններ. կանանց զգեստներ:—Պատմական և նախապատմական հնութիւններ, ձեռագիր յիշատակարաններ և արձանագրութիւններ:—Հին գերեզմաններ և նրանց դանազան տեսակներ. կուրգաններ (բլուրներ) և արկղաձև գերեզմաններ (կռապաշտոնց). վերջինների համեմատութիւն



252-60  
28 256

28282-02 G

նը Սամթավրօի գերեզմանների հետ:— Անհրաժեշտութիւն աւելի մեծ ուշադրութիւն դարձնելու հնութիւնների հաւաքելու և ուսումնասիրելու վրա:

Գուցէ ձեզ կը զարմացնի, որ ես դասախօսութեանս համար իբրև նիւթ ընտրեցի մի նկարագրութիւն, Թիֆլիսին այնքան մօտ և մտաչեղի տեղերի, որոնք իսկապէս մեզանց փոքր մէկին պէտք է ամէն կողմից ծանօթ լինէին, բայց ես ինքս ճանապարհորդութեանս ժամանակ այնքան նոր բաներ տեսայ, այնքան նոր բան սովորեցի, որ չեմ կասկածում, թէ հաղորդելու իրողութիւններից մէկը կամ միւսը ձեր ուշադրութեանն էլ արժանի կը լինի:

Ճանապարհորդութեանս ժամանակը այնքան կարճ էր, որ ես կարող էի միայն դիտել և ոչ ուսումնասիրել կամ հետազօտել տեսածս, և առաջուց խնդրում եմ ձեզանից, որ իմ պատմածներս իբրև առժամանակեայ դիտումներ ընդունէք, որոնց առարկաները սակայն արժանի են խոր ուսումնասիրութեան:

Մենք երկուսով ճանապարհ ընկանք, պարոն Բաֆֆին և ես, և մեզանից ամեն մէկը իր համար առանձին նպատակներ դրած ունէր: Մի կողմից, բնութեան և բնակիչների արդեան կեանքի հետ ծանօթանալն էր մեզ հետաքրքրում, միւս կողմից, մեր կարծիքով, ներկան այնքան սերտ կապված

է թէ պատմական, թէ նախապատմական անցեալի հետ, որ մէկը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է և միւսի հետ ծանօթ լինելը:

Գանձակը, որ այժմ շատ դիւրին կերպով հասանելի է, մեզ համար սկզբնական կայարանն էր, որից մեր իսկական ճանապարհորդութիւնը պիտի սկսվեր, և մեր ճանապարհորդութիւնը կարող է կատարելապէս յաջողված համարվել, որով մենք պարտական ենք այն համակրական և սիրալիր ընդունելութեանը, որ մենք անխտիր վայելեցինք ամեն կողմից: Գանձակի նահանգապետ իշխան Նակաշիձէից սկսած մինչև վերջին գիւղացին իրանց կարեցածի չափ, կամ դորանից էլ աւելի, նպատեցին մեզ, և այժմ էլ ինձ անհնարին է հրապարակապէս չը յայտնել իմ անկեղծ և խորին երախտիքի զգացմունքը այն ընդունելութեան համար, որ մենք վայելեցինք:

Գանձակը ինքն ըստ ինքեան հաղիւ թէ մի քաղաքի տպաւորութիւն է գործում: Նոր, եւրօպական քաղաքը դեռ սկզբնական դրութեան մէջ է, այն ինչ հին, թուրք կերպարանք ունեցող մասը, ինչպէս երևում է, իր նախկին փառքն ու շքեղութիւնը կորցնելու վրա է: Միայն թուրք ընդարձակ հրապարակը չըջապատող բազմաթիւ և բարձր չինարները մի դմայլիչ տպաւորութիւն են գործում և առանձին զրոշմ են կնքում այս ասիական քաղաքի վրա: Գուցէ

նոյնքան յատկանիշ են Գանձակի համար նրա բազմաթիւ այգիները, որք մի քանի վերստի տարածութեան վրա չըջապատում են թողոտ և անմաքուր քաղաքը, և որոնց մէջ եղեգների վրա յենված բուսնում են վազերը իրանց հռչակված խաղողով: Այդ այգիներն են, որոնք խլում են Գեան-ջա-չայի ջուրը, թողնելով չոր և աւազոտ գետի երկայն յատակը, որի երկարութեամբ անվտանգ անցնում են ոչխարների հօտեր թողի ամպեր բարձրացնելով իրանց հտտից:

Այգիներից դուրս գալով, մենք տեսնում ենք երկար տարածութեան վրա ընդարձակվող, բուսականութիւնից զուրկ, ամայի բլուրներ, և միայն տեղ տեղ կենդանացնող ջրի հոսանքի երկու կողմը երևում են, կանաչող օաղիտների նման, մի քանի ուռիներ կամ բարդիներ: Բայց փոքր առ փոքր տեսարանը փոխվում է, ձիաները առաւել դժուարութեամբ են բարձրանում և ահա մենք մտնում ենք մի լերան գագաթի վրա գտնվող հայոց առաջին գիւղը—դա Բռաջուրն է, որ թուրքերը անուանում են Ղարաքէշիշ:

Հարկաւոր է նկատել, որ բոլոր հայոց գիւղերը գոնեա երկու անուն ունեն՝ մէկը բուն հայոց, միւսը թուրքաց, մի հանգամանք՝ որ անփորձ ճանապարհորդին շատ անգամ տեղադրական ծանօթութիւնը անչափ դժուարացնում է: Գժբաղդապէս և այստեղի

շտաբից հրատարակված 5-վերստանոց ճիշդ և զեղեցիկ քարտէսի վրա նախապատված են նոր, թուրքաց անունները, որոնք ոչինչ պատմական անցեալ չունեն, որոնք անյայտ են մեր մատենագիրներին: Այդ նոր անունները դարձել են պաշտօնական, թէև այն առաւելութիւնն էլ չունեն, որ առաւել հեշտ արտասանելի լինէին: Թուրքաց անունները մասամբ պղաւաղված հայոց անուններն են, մասամբ դրանց նշանակութեան թարգմանութիւն, կամ վերջապէս ոչինչ կապ չունեն դրանց հետ: Այսպէս՝ Բանանց գիւղը դարձել է Բայան, Բռաջուր—Ղարաքէշիշ, Փիփ—Չագլիկ, Գետաբակ—Կէդաբէկ, Աղուէտաշէն—Թիւրքիքեանդ, Քարհատ—Գաշէտան, Խաչակապ կամ Խիշլաբակ—Կուշչի և այլն:

Բայց այդ բոլոր գիւղերը, չը նայելով իրանց թուրքաց անունների, անխառն հայոց ազգաբնակչութիւն ունեն, որը պահպանել է առաջվայ հայոց անուններն էլ: Կան և ուրիշ հայ գիւղեր, ուր անունը կորել է, չը նայելով որ բնակիչները պահպանել են իրանց ցեղական անխառն մաքրութիւնը, սրանց թւումն է, օրինակ, Չարդախլու գիւղը:

Իրանց դիրքի վերաբերմամբ հայոց գիւղերը զանազանվում են թուրքերի գիւղերից: Այն ինչ վերջինները տափարակի վրա են գտնվում մեծ մասով, հայերի շէները, լեռնոտ բարձր տեղեր կամ նեղ, ստուերոտ և ջրառատ ձորեր են բռնում: Գիրքը նպաստում է կամ այդեզործութեանը, ինչպէս օրինակ

Բանանց գիւղի մէջ, կամ հողագործութեանը, ինչպէս Փիփի և Խաչակապ գիւղերում կամ վերջապէս անասնապահութեանը որ, որքան կարողացայ նկատել, զլիսաւորապէս թուրքերի պարապմունքն է: Սրան նպաստում է նրանց թափառական կեանքը, ամարանոց քաշվելը, լեռների մառախլապատ զառիվայրների վրա, բարձրաւանդակներում ապրելը:—Գփրաղղապէս թուրքերը իրանց անասունները ոչ միայն արօտատեղերի վրա են պահում այլ և շատ անգամ դէպի անտառներն են քշում—մի վարմունք, որ չափազանց վնասակար հետեւանքներ է յառաջացնում, մանաւանդ նոր անտառների համար, որոնցից շատ տեղ նշոյլներն անգամ չեն մնացել: Ի դէպ է յիշել այստեղ մի երևոյթ, որ ես անդադար նկատում էի: Մեր անցկացած անտառոտ տեղերի համար յատկանիշ էր, որ լեռների միայն հիւսիսային ստորոտներ և զառիվայրներն են անտառապատ, այն ինչ նոյն լեռների հարաւային կողմը դուրկ է այդ բնական զարդից: Ես երկար ժամանակ փորձում էի այդ աչքի ընկնող երևոյթի համար մի մեկնութիւն գտնել, բայց ասպարդիւն կերպով: Գետաբակի գործարանի կառավարիչը պ. Բօլտօնն էր, որ ինձ այս հանկուկի ձիշդ և հասարակ լուծումն տուեց: Թուրքերը առհասարակ անխնայ կերպով են վարվում անտառների հետ և մանաւանդ սիրում են իրանց տաւարը ծառերի բողբոջներով կերակրել: Այդ

զլիսաւորապէս սկսվող դարնանն է լինում, երբ խոտը դեռ չէ բուսել, իսկ արևի կողմը դարձած, հարաւային զառիվայրների վրա բաւանող ծառերի վրա արդէն բողբոջներ են լցվել: Թուրքերը մի քանի բողբոջների համար չեն խնայում ամբողջ ծառեր կտրել և այսպիսով տարուց տարի շարունակվում է լեռների հարաւային զառիվայրների անխնայ և վայրենի աւերումն: Հիւսիսային կողմը այդ վիճակին չէ ենթարկվում, վասն զի կարիք չը կայ այն անտառներին ձեռք տալ, որոնք խոտի բուսանելուց յետոյ են կանանչում: Եւ յիրաւի, մեր անցկացած անտառները մի դարմանալի շքեղ տպաւորութիւն են գործում, թէ իրանց խտութիւնով, թէ ծառերի տեսակների բազմութիւնով: Փիփի գիւղից մինչև Գետաբակ, այսինքն մօտ 12 վերստ տարածութեան վրա, այդ անտառները չէին ընդմիջվում և շարունակվում են շատ աւելի էլ հեռու, դէպի հարաւ՝ դէպի Կալաքեանդ, Բայրամ Ալի և այլն: Մենք անդադար գնում էինք այս բազմերանդ կանանչ խտութիւնների մէջ, որոնց մէջ ես գոնեա քսան տարբեր տեսակ ծառեր կարողացայ դիտել և դրանց տեղական անունները արձանագրել: Ամենաբարձր և վայելչակազմ ծառն է հաճարին. ամենահաստ և ստուերոտն է ընկուղենին կամ ճղուպրին. կաղնին մեծ մասով շատ չէ բարձրանում և տղեղ, ծուռ կազմվածք ունի: Բազմատեսակ պտղաբեր ծառեր լցնում են

անտառները՝ խնձորի, տանձի, շտրի, հոնի, զըկ-  
 ուի, կտողնի կամ թխիլը անպակաս են: Բացի  
 սորանից նկատվում են լոնի, հացի, թղկի, ճապ-  
 կի, սղնի, ուռի, թեղի, հոչլի: Յիշված ծառերից  
 մի քանիսներ թէև սովորաբար թուփեր են հա-  
 մարվում, բայց բաւական նշանաւոր հաստու-  
 թեան են համուում, ինչպէս օրինակ կտողնին:  
 Իսկ ընկուզենին ոչ միայն այնքան հաստ է լինում,  
 որ նրա բունի մէջ ընակութեան համար տեղ էլ  
 կայ, բայց և այնքան բազմաթիւ, որ կատարեալ  
 ընկուզուտներ է կազմում: Նրա փայտից գեղեցիկ  
 և մեծ տաշտեր են պատրաստում, ինչպէս առիթ  
 ունեցայ տեսնել Չարէքավանքի մէջ, ուր մէկ  
 թուրք, ամենասկզբնական մի գործիք և մէկ ճա-  
 խարակ գործածելով այդ արուեստովն է զբաղվում:  
 Մի այսպիսի տաշտ, մօտ 2½ ոտնաչափ մեծու-  
 թեամբ, մօտ 50 կօպէկ արժէ:

Այս կողմերը, ինչպէս և Ղարաբաղը, լիքն են  
 բազմատեսակ հանքերով: Փիփ գիւղի մօտ գտնվում  
 է շիպի քարը, մի քանի վերստ տարածութեամբ և  
 բռնում է Քյամանդ անուանված լեռան ամբողջու-  
 թիւնը: Այդ քարից պատրաստվում է պաղլեղ, որ  
 ստացվում էր և Փիփի գիւղացիներից ամենանա-  
 հապետական կերպով: Այժմ թէ փիփեցիք, թէ  
 վարչութեան մասնաւոր ձեռնարկողին յանձնած  
 գործարանը այլ ևս այդ պատրաստութեամբ չեն  
 զբաղվում և այդ արդիւնաբերութեանը, որ գուցէ

խելացի կերպով ձեռնարկած, կարող էր մրցել և  
 արհեստական պաղլեղ պատրաստող գործարան-  
 ների հետ, վիճակված է առաւել յաջող ժամա-  
 նակների սպասել: Բանանց գիւղի մօտ գտնվող  
 մագնիսական երկաթին գուցէ նոյնքան մեծ ա-  
 պագայ է սպասում և ժամանակով այդ պահեստ-  
 ների արդիւնքը կը մրցի գուցէ այլ երկիրների եր-  
 կաթի հետ—գոնեա այսպէս են վկայում գործին  
 ծանօթ մարդիկ: Բայց այդ կողմերի ամենայատ-  
 կանիչ հանքերն են պղնձի հանքերը, որոնց ըն-  
 դարձակութեան ասպարէզը Երասխի ձախ ափից  
 սկսած շարունակվում է մինչև փոքր Կովկասի  
 հիւսիսային ստորոտը. գրանք անսպառելի հարս-  
 տութիւն են ներկայացնում շատ հարիւր տարիներ,  
 ապագայի շատ սերունդների համար, եթէ նրանց  
 ձեռք տվողները մի գլխաւոր պայմանին կը հե-  
 տենեն՝ խելացի և հիմնաւոր անտեսութեան ըսկզ-  
 բունքի համեմատ վարվել:

Այս կատարելատիպին հասել է առժամանակ  
 միայն մի գործարան, Միմէնս եղբայրների Գետա-  
 բակի պղնձի գործարանը, որ մի բարձր կուլտու-  
 բական կղզի է անմշակ և անտէր մնացած շրջա-  
 պատող գիւղերի մէջ: Կովկասի համար դա մի  
 բաղդ էր, որ Միմէնսների պէս մի հարուստ տուն  
 իր շատ միլիօնաւոր կարողութեան մի մասը նուի-  
 րել է մեր երկրի մէջ հանքային արդիւնաբերութիւն  
 զարգացնելու նպատակով: Այստեղ երևում է թէ

ինչ կարող է կատարել մի մասնաւոր մարդ, երբ մինչև անգամ իր սեփական շահերը աչքի առաջ ունի, բայց միևնոյն ժամանակ ընտելացնում է ժողովրդին կանոնաւոր և ազնիւ աշխատանքի և գործնով բարոյականացնող ազդեցութիւն է գործում մի դաւառի ամբողջ ազգաբնակչութեան վրա: Երևում է ինչ հետեանքին կարող է հասնել մի խելացի տնտեսութիւն, որի զլխաւոր սկզբունք են խընայողութիւն, պարտաճանաչութիւն և հմտութիւն: Սիմէասի գործարանը ոչինչ միջոցներ չէ խնայում, որ աւելացնի արդիւնաբերութիւնը առանց վնասելու երկրի բնական առաւելութիւններին: Պղնձի և վառելափայտի ոչ մի կտոր ապարդիւն կերպով չէ կորչում: Կտրված անտառներն տեղ նորերն են ցանվում, որոնց խնայելու և ապագայի համար պիտանի դարձնելու համար գործարանը մեծ ծախքերով կառուցել է 30 վերստ երկարութիւն ունեցող մի երկաթուղի, որ աւելի զիք տեղերով է անցնում, առաւել կարճ պտոյտներ է անում, քան թէ Սուրամի զիծը: Այդ երկաթուղու նպատակն է փայտ մատակարարել թէ Գետաբակի, թէ նոր հիմնած կալաքեանդի գործարանին, նա 160 կամուրջներով է անցնում, նրա վրա ծախսվեցաւ  $\frac{3}{4}$  միլիոն ռուբլ: Ուրեմն սրբան շահաւէտ է պղնձի գործարանը, եթէ նա այսպիսի ծախքեր արդիւնաւոր է համարում: Գետաբակի գործարանը աշխատացնում է 3000 մարդ և այդ է պատճառը, որ

մօտակայ զիւղերի բնակիչները համեմատաբար նշանաւոր բարօրութեան են հասել: Փիփեցլինկը օրինակի համար մեծ բազմութեամբ բանում են այնտեղ և ունեն այսպիսով վստասակի այլ միջոց, քան հողագործութիւնից բղխողը, որ հողի պակասութեան և դրա մշակութեան չը կատարելագործված դրութեան պատճառով, բաւականացուցիչ չէ լինում:—Գործարանը ուրեմն բարոյականացնող և զարգացնող ազդեցութիւն է գործում զիւղացիներին վրա, սովորեցնելով, անխտիր, թէ հայերին, թէ թուրքերին կանոնաւոր աշխատանքին: Յիշելու արժանի է, որ առաւել բարձր պաշտօնները մշակների մէջ, այն պարսպմունքները, որոնք աւելի մեծ ճարպիկութիւն և պատասխանատվութիւն են պահանջում, հայերի ձեռքումն են, վարպետները հայեր են, այն ինչ թուրքերը մեծ մասով աւելի ստոր պարսպմունքների համար են գործ անվում: Գետաբակի նման գործարաններին, որոնց նըպատակն է օգուտ քաղել կովկասի բնական հարստութիւններից, վիճակված է կերպարանափոխել ապագայում ամբողջ կովկասը և մեզ այժմ արդէն երազի ձևով հանդիսանում է ապագայի քաղաքակրթված, զարգացած և հարուստ երկիրը, որ հասել է իր բարօրութեանը իր բնակիչների ազնիւ, տոկուն և խելացի աշխատանքով...

Ասածներէիցս կարելի է եզրակացնել, որ մեր երկրի շրջը և բնական հարստութիւնները իրանը

մատնացոյց են անում, թէ ինչ ընթացքով պիտի զարգանայ նա, ինչ է նրա ապագան: Անմխիթար, անբնական և տարօրինակ է այն երկրի դրութիւնը, որ միայն օտար երկրի մթերքով է կերակրւում, որ սպառում է առանց արդիւնաբերելու: Եւ այդ տարօրինակ, հիւանդ դրութեան մէջ գտնւում է այժմ կովկասը և կը գտնվի էլ, քանի որ բնութիւնից նախագծած ճանապարհով յառաջ չի ընթանայ, քանի որ գլխաւոր ուշադրութիւնը կը դարձնի առևտրի վերա: Գորա մէջ չէ մեր բարօրութիւնը, հաւատացեք, այլ երկրիս հարստութիւնները կանոնաւոր, խելացի և խնայողական մշակութեան մէջ: Կովկասը պէտք է լինի ոչ միայն սպառող, օտար հարստութիւններով ապրող, այլ սեփական միջոցներ վայելող, արդիւնաբերող երկիր: Գա է նրա ցանկալի ապագան և մեր պարտաւորութիւնն է նրա այս տեսակ զարգացմանը նպաստել:

Հայոց գիւղ մտնող ճանապարհորդը տարբեր տպաւորութիւն է ստանում, նայելով թէ օրվայ օր ժամերին լինում է այդ բայց մի բանի մէջ այդ տպաւորութիւնները միմեանց նման են՝ ոչ ոք չէ կարող հերքել, որ հայ գիւղացին աշխատասէր և գործունեայ է. անգործ մարդիկ հազիւ կարելի է տեսնել, եթէ առանձին կերպով աննպաստ չէ եղանակը:

Առաւօտները մենք գիւղերը մտնելով, միայն

կանանց, ծերերին, երեխաներին և հիւանդ տղամարդկերանց էինք հանդիպում, որովհետև հասակաւոր և առողջ տղամարդիկ կամ այգիներումն էին զբաղված, կամ աշնան ցանքի համար էին բարձրացել լեռների դառիվայրների վերա: Մի մի անգամ կանայքն էլ վարուցանքի աշխատանքի մէջ օգնում էին իրանց մարդկերանց, որոնք ցանքից տափան էին անցկացնում արտերով, բայց մեծ մասը նրանք առաւօտները իրանց տան մէջ տնային գործերով են զբաղված: Մի տեղ տեսնում ես իրար հարևան մի քանի տուն միասին հաց են հունցում, որովհետև այդ տներից միին պատկանող թոնդիլը վառվում է. մի այլ տեղ կանայք բուրդ կամ թել են մանում, գուլքաներ են գործում, կապերտներ կամ «կարպեաներ» են պատրաստում. ոչ մի տեղ անգործ կանայք չէք տեսնի, նրանք ժամանակ չեն շռայլում: Ինչպէս երևում է կերակրվելու ձևը գիւղից գիւղ, տունից տուն տարբեր է լինում, նայելով օրքան ունևոր են դրա բնակիչները: Բանանց և Փխի գիւղերը հարուստ գիւղերի թւում կարելի է հաշել, նրանցից առաջինը հարուստ է իր այգիներով, այն ինչ երկրորդի բնակիչները աւելի հողագործ են և գործարանի արուեստաւոր: Թէ Բանանցի, թէ Փխիի մէջ կը տեսնէք ոչ միայն հասարակ միջարկանի հողի խրճիթներ, այլ և պատշգամբներով երկյարկանի քարէ տներ: Այդ վերջինները սովորա-

բար միանգամից չեն շինվում, այլ մի քանի տար-  
վայ ընթացքում: Առաջին յարկը շատ անգամ  
վերջացնելուց յետոյ, տան տէրը դեռ պէտք է  
միջոցներ հաւաքի շինութիւնը շարունակելու հա-  
մար և հազիւ չէ լինում, որ երկրորդ յարկի պատ-  
րաստ եղած պատերը կրկին մի տարի սպասում  
են, մինչև որ դրվեն պատուհաններ և դռներ, և  
սենեակները բնակութեան համար պատրաստ լի-  
նեն: Առհասարակ տիրում է բաւական մաքրու-  
թիւն և բարօրութիւն. գեղեցիկ կարպետներ և  
խալիչաներ զարդարում են այդ երկյարկանի դռ-  
արթ և մաքուր օդ պարունակող սենեակները:  
Ըստ երևոյթի, զիւղացիք բաւական լաւ էլ կերա-  
կրվում են: Բանանց զիւղում մեզ ասացին, որ  
զիւղացիները սովորաբար չարաթ և կիրակի օրե-  
րը ոչխարներ են մորթում: Հացը թխվում է շա-  
բաթը մի անգամ: Ի՞նչ է զիւղացիների սովորա-  
կան կերակուրը, մենք մեր սեփական աչքով ա-  
ռիթ չունեցանք տեսնել, որովհետեւ մեզ համար  
պատրաստված ճաշը՝ որ բաղկանում էր սլանրից,  
բաղմատեսակ կանանչեղէնից, խիարներից, տապա-  
կած վառիկներից, տեղական դինուց և այլն, հա-  
զիւ թէ կարելի է համարել սովորական ամեն-  
օրեայ ճաշ հասարակ զիւղացու համար:

Միայն մի բանի մէջ նկատվում է անմաքրու-  
թիւնը՝ մարմնի ու զգեստների մէջ: Ինձ ասում  
էին, որ այս կողմերի հայոց զիւղերը դուրկ են

բաղանդներից, իսկ զիւղացիների շորերը թէև  
լաւ պահպանված, շատ անգամ գործածութիւնից  
յառաջացած կեղտի և ճարպի նշաններն են ցոյց  
տալիս:

Ես ակամայ յիշում եմ այդ դէպքում, որ մի  
քանի տարի սորանից առաջ մի այլ, հեռաւոր  
երկրում, Ուրալեան լեռներում գտնվելով, ես  
զարմանում էի այնտեղի զիւղացիների մաքրասի-  
րութեան վերա. այնտեղ ամեն մի զիւղացու տան  
այդու կամ բանջարանոցի մօտ գտնվում է մի առան-  
ձին շինութիւն, որ բաղանիքն է: Իսկ զգեստնե-  
րի վերաբերութեամբ աչքի է ընկնում մեր ճա-  
նապարհորդած երկրում բնակվող դուխօբօրների  
կանանց մաքրութիւնը, համեմատելով հայ զիւղա-  
ցի կանանց շորերի առաւել փոքր խտակութեան  
հետ:

Այնու ամենայնիւ հայ կանանց շորերը շատ  
զեղարուեստական են և առանձին ուրախ և  
զուարթ տեսարան է հանդիսանում մի ճանապար-  
հորդի աչքին, երբ նա արևի մայր մտնելու ժա-  
մանակ մօտենում է մի զիւղին: Մի լերան զառի-  
վայրի վերա ցիր ու ցան երևում են բաղմաթիւ  
տներ, որոնց տափակ կտուրների վերա գործունեայ  
կեանքն է եռ գալիս. ամբողջ զիւղի կանայք և  
երեխաներ իրանց կարմիր կամ վառ դեղին շորե-  
րով թափվում են փողոցների կամ կտուրների  
վերա, ցրվում են ամբողջ զիւղի մէջ, կուժերը ուսե-

րին ջրի են գնում, կամ կտուրների վերայից հա-  
 ւաքում են չորացնելու համար սիւււված հոնի հա-  
 տիկները: Ամբողջ գիւղը առանձին լուսով է լու-  
 սաւորվում, բաղմամբիւ կարմիր և դեղին առար-  
 կաներ ասես թէ աշխատում են երկարացնել մայր  
 մտնող արևի լուսի ազդեցութիւնը, կամ իրանց  
 փայլումով նրա տեղը բռնել: Ես ակամայ ձիս  
 կանգնեցրի այդ գուարթ տեսարանը առաւել հան-  
 գիստ կերպով վայելելու համար, այդ ներդաշնա-  
 կութիւնը, որին լրացնում էին և ուրախ բաղմա-  
 թիւ ձայներ: Ո՞վ կարող էր կասկածել, որ այդպի-  
 սի մի գիւղ իրան բաղդաւոր է զգում, բարօրու-  
 թիւն է վայելում: Իսկ դա հետևանք չէ արդեօք  
 խղճմտաւոր և անընդհատ աշխատանքի:

Մեր անցկացած գիւղերի բնակիչները շատ ա-  
 ուողջ են երևում. իսկ կանայք մեծ մասով գեղե-  
 ցիկ են, և այդ դարմանալի չէ, եթէ ճիշտ է մեզ  
 հաղորդված երևոյթը, որ գիւղացիները, բնածին  
 ներքին զբացմունքից զրոյված, միայն գեղեցիկ և  
 աւուղջ աղջկերանց հետ են ամուսնանում, որ  
 նրանց չէ գրաւում հարստութիւնը, երբ դա միա-  
 տրված է տգեղութեան հետ:

Այդ կողմերի կանանց զգեստին գուցէ յատկա-  
 նիշ կարելի է համարել, որ նրանք ոչինչ զարդ  
 չեն գործ ածում մարմնի վերա— ոչ ականջի օղեր,  
 ոչ ապարանջաններ (բլազուկներ). զարդարված է  
 լինում միայն վերի շորը, որի ճեղքված մէկ միւ-

սին կոճկված թեքերի երկու եզերքին կարած են  
 լինում դրամներ. նոյնպէս և գլխի և պարանոցի  
 վերա շարված են դրամներ, որք, զգեստ կրողի կա-  
 րողութեանը նայելով, կամ 20-կօպէկանոցներից,  
 կամ ոսկիներից, կամ վերջապէս հին դրամներից  
 են բաղկանում:

Բոլոր մեծ գիւղերը իրանց միջոցներով ուսում-  
 նարաններ են հիմնել: Բանանց, Փիփ, Չարդախ-  
 լու գիւղեր ուսումնարաններ և մի մի վարժապետ  
 ունեն և ես առիթ ունեցայ տեսնել, թէ Փիփի  
 վարժապետը, որի մօտ 100-ի չափ երեխաներ են  
 սովորում, գիւղացիների կողմից պատիւ է վայե-  
 լում: Գիւղացիները անդադար նրան են գիմում  
 ամեն տեսակ հարցերով և նրա և նրանց մէջ ե-  
 դած յարաբերութիւնները բարեկամութեան և յար-  
 գանքի դրոշմ են կրում: Ես չը գիտեմ որքան  
 ճիշտ էր իմ գիտածը, բայց ինձ երևում էր, որ  
 վարժապետը քահանայից առաւել մեծ յարգանք է  
 վայելում: Ես բնակիչների թւի մասին ոչինչ հաս-  
 տատ բան ասել չեմ կարող. գիւղի տանուտէր-  
 ները կարողանում են միայն այն թւերը հաղոր-  
 դել, որք արդիւնք են 15 տարի առաջ կամ էլ  
 աւելի վաղ եղած ժողովրդագրութեան (կամերալ):  
 Դորա հիման վերա օրինակ Փիփ գիւղը 250  
 տուն ունի, այնինչ այժմ ասում են, որ դրանց  
 թիւը 400-ի չափ կը լինի: Բայց այդ թիւն էլ  
 դժուար թէ հնարաւոր է ճիշտ կամ իրականու-

409  
2882-62

Թեան մօտ համարել, դա էլ աւելի պակաս է երևում քան թէ այն, ինչ որ աչքն է տեսնում:

Գիւղերի անունների մասին խօսելով, ես յիշել էի, որ այդ անունները հին պատմական ժամանակներից մնացորդներ են: Անկասկած շատ դիւղեր ժամանակների ընթացքում կորել-գնացել են, շատեր միայն աննշան նշոյլներ են թողել, շատ ուրիշներից մինչև անգամ աւերակներ չեն մնացել, իսկ միւս կողմից այժմ էլ ցիր ու ցան գտնվում են մատուռների, եկեղեցիների, և վանքերի աւերակներ, անտառների մէջ, առանձնացած և մոռացված, չբնակատված դերեգմանաքարերով և խաչաքարերով, որոնց վերա երբեմն պահպանվել են արձանագրութիւններ: Շամքօր գետի, այդ անտառապատ արազընթաց ջրի հոսանքի ձորի տարածութեամբն է գլխաւորապէս, որ մէկ մէկի մօտ շարվում են հին պատմական յիշատակները: Շամքօրի ձորը մի խոր ճեղքի պէս բաժանում է երկու շղթաների շարքերը և նրա ընթացքով անա մէկ մէկից յետոյ, աչքին ընկնում են զանազան աւերակներ: Ահա «եօթ եկեղեցի» ասված տեղը, որ իսկապէս Շամքօրի աջակողմնայ գետակից Աղուէսաշէնի ջրի ձախ եզրի վերա է գտնվում: Գրանք բարձր և գրեթէ անմատչելի ուղղանայեաց ժայռի մէջ փորված խուցերն են, որոնց մէջ, ինչպէս հաւատացնում են, հին ժամանակներում պատսպարան էին

որոնում պատերազմից հալածվածները: Պատմում են նաև, որ այդ եօթ եկեղեցիներից մի քանիսները մինչև այժմ էլ զանազան իրեր են պարունակում: Օրինակի համար ասում են, որ մի անգամ մի ագուս այդ եկեղեցիներից մինի միջից մի ձեռագիր դուրս բերեց և վայր ձգեց! Բայց ես միայն մի պարունին տեսայ, որ ինքն անձամբ մագլցել էր այդ անմատչելի քարափի վերա, բայց նրան էլ եօթ եկեղեցիներից միայն մէկը, առաջինը յաջողվել էր տեսնել: Գա մի փոքր խուց էր, ժայռի մէջ փորած, բայց արուեստապէս քարերով պատած: Նրա մէջ ոչինչ հին յիշատակ, ոչինչ հնութիւն պարոնը չը գտաւ: Մնացած վեց եկեղեցիները բնաւ մատչելի չէին և յաջորդ ճանապարհորդներին թողված է վճռել կայ արդեօք դրանց մէջ մեր նախնիների պատմութեան վերա նոր լոյս ձգող մնացորդներ:

Բարձրանալով Շամքօրի հոսանքով մենք հասնում ենք Գևտաքակից իջնող գետակին, բայց արդէն զորանից առաջ մեր հայեացքը դրաւում է մի մեծ, ընդարձակ աւերակ, որ երկու գետերից կազմված թերակղզու ժայռոտ բարձրութիւնն է բռնում: Գա հոյակապ Նամուղաբերդն է, որ, չը նայելով դարերի անթիւ մրրիկների, մնացել է իր պարիսպներիով, աղիւսաշէն և քարաշէն պատերով և աշտարակներով: Բերդի տիրապետող դիրքը և նրա ճարտարապետութիւնը՝ անկասկած կարող

են նայողին զմայլեցնել, բայց երևի մի ժամանակ կարող էին և սարսափ դցել յարձակվողներին վերա: Ինչպէս երևում է, շատ բերդերի համար ընտրում էին հին ժամանակներում երկու միաւորվող ջրերի մէջ գտնվող թերակղզիները, մանաւանդ եթէ նրանց ժայռոտ բարձր դիրքը նպաստաւոր էր պաշտպանութեան: Նամրուղայ բերդը հետագոտված չէ—նա էլ գուցէ արձանագրութիւններ է պարունակում, որոնք կօգնեն իր ժամանակի պատմութիւնը վերականգնել: Պ. Բ ա Ֆ Ֆ ի ի կարծիքով դա գուցէ Գարտամանաց բերդն է, որի մասին խօսում են մեր պատմագիրներ, մի կարծիք, որ հաւանական է, քանի որ այդ բերդից ոչ հեռու այժմ էլ գտնվում է Գարտամանիք անունով դիւղը: Անմիջապէս Նամրուղայ բերդի տակ Շամքօր դետը առաւել արագ հոսանք է ստանում, գլորվելով աւելի խոր ձորի մէջ, այնինչ, բերդին չը հասած, նրա ձորը ընդլայնանում է և նա կանանչ և թարմ խոտով ծածկված մարդերով է անցնում:

Այդ տեղից ոչ հեռու գտնվում է Չարէքավանքը: Թէև նա հարուստ սեփականութիւններ ունի, հաշուելով մօտ 40 հազար դէսեատին անտառ \*)

\*) Մ ա ն օ թ. Այս գեղեցիկ անտառները վանքը կառավարող հայր սուրբը անհաշիւ կերպով կտրատում է, ածուխ այրելու նպատակով, և հաւատացնում է, որ նա այդ անում է միայն վան-

բայց ինչ են այդ անաղին կալուածների եկամուտները: Ինչպէս երևում է, դրանք մեծ չեն, վասն զի ինքն վանքը շատ խեղճ դրութեան մէջ է գտնվում: Բակը անմաքուր, ներսը բարձր թողի եղած, դռները պակասող ապակիների փոխանակ հին լրագիրներով կպցրած: Ի՞նչ համեմատութիւն սրա և խաչակապ դիւղի մօտ գտնվող Թարգմանչաց վանքի մէջ, որ հողեր, հարստութիւններ չունի, բայց մաքուր, կոկիկ է, որին ճանապարհորդը հասնում է յարմար ճանապարհներով, որի մէջ նա գտնում է գեղեցիկ, մաքուր խուցեր, գտնում է և սիրալիր ընդունելութիւն: Ի՞նչու այդ տարբերութիւն—Չարէքավանքը մի վարդապետն է կառավարում, այն ինչ Թարգմանչաց վանքի մասին հոգում է մի աշխարհական, դանձակեցի պ. Տէր-Ներսէսեան, որ իր ընտանիքով սովորաբար վանքի մէջ ամառ է անցկացնում: Գուցէ վանքերը առաւել մխիթարական դրութեան մէջ կը լինէին, եթէ նրանք կառավարվէին աշխարհականների ձեռքով, ինչպէս շատ անգամ լինում էր Ներսէս V-ի օրով, որ աշխարհական հոգաբարձուներ էր նշանակում վանքերի վերա: Վանքերը և եկեղեցիները ոչ միայն իբրև կենդանի յիշատակ և վկայ հին ժամանակների մի մեծ նշանակութիւն ունեն ան-

քի իրաւունքները այս կալուածների վերա հաստատելու համար:

ցեալի հետ ծանօթանալ ցանկացողները համար, նրանց մէջ են պահպել մեծ մասամբ արձանագրութիւններ և ձեռագիր աւետարաններ և սուրբ գրքեր, որոնք նշանաւոր են նրանց մէջ աւելացրած յիշատակարանների կողմից: Իմ գործս չէ խօսել այդ յիշատակարանների պատմական նշանակութեան վերա, քանի որ մի ուրիշ, պ. Բաֆֆին ինձանից աւելի կոչված է մեր տեսած և մասամբ արտագրած յիշատակարաններից այն օգուտը քաղել, որ նրանք կարող են տալ այդ տեղերի և գուցէ ընդհանրապէս մեր անցեալի ճանաչմանը: Ես կասեմ միայն, որ մի քանիսը այդ յիշատակարաններից մեզ նշանաւոր երևեցան և ով գիտէ սրբան սրանց նման ուրիշ գրչագիրներ կան, որոնք մութ և խոր խուցերում թաղված են առանց ուշադրութեան, անյայտ մոռացութեան մէջ... Իսկ մենք որոնում ենք նոր նիւթեր մեր նախնիների կեանքը պատմապէս վերականգնելու նպատակով և աշխատում ենք կաթիլ առ կաթիլ հաւաքել ամեն մի վկայութիւն այդ մոռացված, դրեթէ արհամարհված անցեալի մասին...

Պանծակի տափարակը և Շամբօրի ձորը հարուստ են ոչ միայն պատմական այլ և նախապատմական յիշատակներով: Անմիջապէս Պանծակից հարաւ, Հէլէնէնդօրֆ գերմանական կօլօնիայի ճանապարհի վերա, տափարակի մէջ աչքին են ընկնում ցիր ու ցան բլուրներ, որոնց բնական

չը լինելը՝ ակներև է: Գրանք «կուրգաններ», այսինքըն բլրաձև գերեզմաններ են, որոնք դեռ հետազօտված չեն, որովհետև մինչև այժմ, որքան ես լսած եմ միայն մէկը դրանցից արտափորված է եղել, բայց իր մէջ ոչինչ հնութիւն չէ պարունակել: Մեր ճանապարհորդութեան տեղութիւնը շատ կարճ է եղել, և մեզ ժամանակ պակաս էր այդ կուրգաններից մէկը բանալ տալու: Ընդհակառակ, Փիփի և Գետաբակի մօտ գտնվող բազմաթիւ գերեզմաններից շատեր մինչև անգամ գիւղացիներին յայտնի են, իրանց բովանդակութեամբ: Շատ անգամ մի տան շինութեան համար գետինը փորելով, գիւղացիները առիթ են ունեցել զսնազան հին, նախապատմական իրեր գտնելու՝ Փիփի մօտ կաւեայ անօթներ, յուլունքներ, երկաթից շինած զանազան զարդեր, որոնք սակայն չը պահպանվեցան ամբողջութեան մէջ: Բացի սորանից Գետաբակի մօտ գտնվեցան, ինչպէս շատեր պատմում էին, նաև ոսկեայ իրեղէններ, զէնքեր, հին դրամներ և այլն. Գետաբակի գերեզմանները, ինչպէս երևում է, առաւել ուշ և արդէն պատմական շրջանին են պատկանում, այն ինչ Փիփի գիւղի մօտ եղածները պէտք է անկասկած մի առաւել հին, նախապատմական, կամ գոնեա նախաքրիստոնեական կուլտուրայի վերաբերել: Գիւղացիները իրանքն էլ, ըստ երևոյթի, այդ ընդունում են, գերեզմանատունը «կուսպաշտոն» ա-

նուանելով: Գիւղացիները բոլորովին առանց նախապաշարմունքի են նայում այդ գերեզմանների վերա և առանց դժուարութեան յօժարվում են բացանել նրանց: Գերեզմանները իրանց ճարտարապետութեան կողմից շատ նման են Մցխեթի մօտ եղած Սամթավրօ անուանված գերեզմանատան մէջ գտնվողներին: Ինչպէս այնտեղ, նոյնպէս և այստեղ շիրիմը կազմված է ուղղահայեաց կանգնեցրած քարի սալերից, և քառակուսի արկղերի ձև ունի: Այդ արկղաձև գերեզմաններ, «կռպաշտների տներ», մօտ մի սաժէնի երկարութեամբ, կէս սաժէն լայնութեամբ և փոքր ինչ աւելի մեծ խորութեամբ, ծածկված են վերեկից նոյնպիսի, նոյն քարի սալերով: Այդ սալերը Փիփի մօտ շիպի քարից են, անկասկած այն պատճառով, որ այդ քարը բաւականին հեշտ կերպով սալերի է կտրվում և բոլոր շրջականների մէջ տիրապետող վէմն է կազմում: Ամեն մէկ գերեզմանի երկարութեան առանցքի ուղղութիւնը զրեթէ նոյն է, ինչպէս Սամթավրօի գերեզմանատան մէջ՝ հիւսիսաարևմտքից դէպի հարաւարեւելքը: Մենք մի օր վարձեցինք հինգ Փիփեցիներ և բանալ տուինք երեք գերեզմաններ: Արդիւնքը շատ մեծ չեղաւ՝ մինի մէջ գտնվեցան կաւեա անօթների կտորներ, միւսի մէջ մօտ 15 հատ յուլունքներ, ժանգոտած երկաթի մի կտոր, մի քանի ոսկորներ և երկու մարդկային ատամներ, որոնք միշտ

առաւել երկար դիմանում են ժամանակի աւերիչ ազդեցութեանը, քան թէ ոսկորները: Այդ վերջինները Փիփի գերեզմանների մէջ զրեթէ կատարելապէս փոշի էին դարձել, այն ինչ Սամթավրօյի գերեզմաններում զրեթէ կատարեալ կմախքներ կարելի է գտնել, թէև ոսկորները փշրուն են դարձել և նրանց դժուարութեամբ միայն կարելի է ամբողջութեամբ գերեզմանից հանել: Փիփի և Սամթավրօյի գերեզմանները թէ ձևի, թէ նրանց մէջ գտնող իրերի կողմից շատ նման են միմեանց, բայց առժամանակ միայն փոքր նիւթ ունենալով առաջիններից, դժուարին է վճռել թէ որդեօք նրանք երկուսն էլ նոյն շրջանին են պատկանում, կամ—և այդ աւելի հաւանական է—Փիփի կռապաշտնոցը առաւել հին է, քան թէ Սամթավրօյի գերեզմանատունը:

Ինչպէս բոլոր ուրիշ հարցերի, նոյնպէս և մեր երկրի նախապատմութեան այս մնացորդների վերաբերմամբ ապագայի հետազօտութիւններին է թողած նոր լոյս զցել այս գիտնականապէս անմշակ տեղերի վերա և դուցէ՛ նշանաւոր եզրակացութիւնների հասնել նախկին բնակիչների ներքին կեանքի մասին և այսպիսով վերականգնեցնել մեր երեւակայութեան առաջ մի պատկեր այն հեռաւոր ժամանակների կեանքի, որի միակ վկաններն են այդ գերեզմանները իրանց մէջ պարունակված մնացորդներով:

Հին ժամանակներից ՚ի վեր յատկանիչ էր հայերին գրեթէ ոչինչ չարձանագրել, ինչ որ վերաբերվում է նրանց ամենօրեայ կեանքին և չրջապատող երևոյթներին: Այս է պատճառ, որ մինչև ներկան չեն հասել ո՛չ հինաուուրց կեանքի նըկարագիրներ, ո՛չ էլ ազգի բաժաստեղծական արտայայտութիւններ: Այդպէս օրինակ Մովսէս Խորենացի, Գողթան դաւառի երգերի մասին խօսելով, միայն կտորներ է բերում այդ երգերից, աւելացնելով, որ դրանք ամենքին յայտնի են, ուրեմն կարիք չը կայ նրանց կրկնել: Հին ժամանակները մեզ աւանդել են միայն չոր պատմական իրողութիւններ, թագաւորների և պատերազմների նկարագիրներ և պատահապէս միայն մի քանի ակնարկութիւններ ներքին կեանքի մասին:

Այս կերպով շատ անգամ և մենք այժմ վերաբերվում ենք դէպի մեր ներկայ կեանքը: Շատ բաներ, որ մեզանից մէկը կամ միւսը կարող էր իբրև իր դիտածը հաղորդել, ուրիշներին ծանօթ բան է երևում,— և մնում է չը պատմված, չարձանագրված, և այս է գլխաւոր պատճառը, որ մեզ մօտ այնքան սակաւաթիւ են գրական յիշատակներ, թէ մօտ անցեալի, թէ ներկայի վերաբերմամբ, իսկ եթէ կան, դրանցով էլ մենք մեծ մասամբ պարտական ենք օտար ճանապարհորդներին, հետազօտողներին:

Գուցէ այն էլ, ինչոր ևս այսօր ձեզ հաղորդե-

ցի ձեզանից շատերի համար մասամբ նոր բան չէ եղել, բայց գուցէ յիշված իրողութիւններից մէկը կամ միւսը այնու ամենայնիւ մի նորութիւն կը կազմի ձեզ համար: Բնական և ազգագրական պայմաններ կարող են ժամանակի ընթացքի մէջ փոփոխվել, և անշուշտ կը փոփոխվեն զարգացող քաղաքակրթութեան զօրութեան շնորհով: Ապագայ սերունդները գուցէ նոյնքան կը ցանկանան մեր այժմեան ներկան ճանաչել, ինչպէս մենք աշխատում ենք նախնիների կեանքի մասին մեզ մի պատկեր կազմել և այս նպատակով պատկառանքով հաւաքել ամեն բան, որ կարող է այդ անցեալը լուսաւորել: Մեր պարտականութիւնն է ուրեմն մեր յաջորդների գործը հեշտացնել և չը թաղել մոռացութեան մէջ այն, ինչոր մեզ յայտնի է ներկայից, այլ մեր կարողութեան չափ աւանդել ապագային մի լիակատար և բազմակողմանի պատկեր մեր այժմեան կեանքից:

Այդ մի մարդու գործ չէ կարող լինել՝ դա ծանր կը լինէր և անիրագործելի, բայց մեզանից ամեն մէկը ոչ միայն կարող է այլ և պէտք է իր դիտեցածի չափ յիշված նպատակին ծառայէ: Սկիզբը անշուշտ անկատար կը լինի, բայց փոքր առ փոքր կը զարգանայ մեր մէջ մի առաւել կատարեալ ծանօթութիւն մեր երկրի բազմակողմանի պայմանների և երևոյթների հետ: Կտոր կտոր,

միմեանցից անկախ հաւաքված իրողութիւնները վերջապէս մի թանկագին նիւթ կը կազմեն ապագայի գիտնականների համար և, ըստ երևոյթի, անկապ իրողութիւնները կը ձուլվեն մի ներդաշնակ ամբողջութեան մէջ, որ կը լինի մի հաւատարիմ պատկեր մեր նախապատմական և պատմական անցեալի:

Թիֆլիս.

Ա. Արծրունի



Дозв. ценз. Тифлисъ, 14-го Сентября 1883 г.

(Перепечатано изъ газ. „Мшакъ“ №№ 128 и 129)

Ltn  
252

Типографія Канцеляріи Главн.нач. гражд. ч. на Кавказѣ.

«Ազգային գրադարան»



NL0115094

